

# ՍԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

### Հարգելի՝ ղիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց քողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի ոչ մի բառում չի գրվում ը.

- 1) ան-նկճելի, երկ-նչել, կր-նկակոխ, շր-խկոց
- 2) զործ-նկեր, առ-նրեր, ակ-նբախ, ին-սուն
- 3) ան-ստույգ, առ-նչություն, ակ-նթարթ, կոր-նթարդ
- 4) հոտ-նկայս, ակ-նբախ, մարտ-նչել, օր-ստօրե

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ճ.

- 1) ա-բարյացակամ, բա-բեր, ա-բասիր, ա-պարկեշտ
- 2) բա-բասել, հա-պատրաստից, ա-բերրիություն, ա-փույթ
- 3) ա-պայման, ա-պաճույճ, շա-բուտ, ա-պետք
- 4) Մա-վել, զա-բյուղ, ա-բարիշտ, ա-պարփակ

3 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին.

- 1) վայր(ի)վերո, նոր(ջուղայեցի), առ(այն), համ(երկրացի)
- 2) բարձր(աշխարհիկ), հիսուն(երեք), առ(այժմ), ծունկ(չոքել)
- 3) առ(ձեռն), բերնե(բերան), քաջ(առողջություն), թերև(քաշային)
- 4) բուժ(օգնություն), երկ(կենցաղ), ի(վերուստ), առ(հավետ)

4 Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.

- 1) ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ, ԳԱՅԼ ՎԱՀԱՄ
- 2) ԱՐԾԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԱՇՈՏ ՈՂՈՐՄՍԾ, ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ
- 3) ՆՈՐ ԱՐԵԾ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՇՈՆԱԾԽԱՐՀ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ
- 4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՕՆՈՐԵ ԴՐ ԲԱԼԶԱԿ, ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱ

5 Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) վտանգագերծ, ապահով, անվնաս, անաղարտ
- 2) դեռափթիթ, մատղաշ, մանկամիտ, պատանի
- 3) անիմաստ, անմիտ, անկաշկանդ, անհերեք
- 4) ակնդետ, սևոռուն, անքրիթ, ուշադիր

6 Ո՞ր շարքի ոչ բոլոր բառագույգերն են կազմված հականիշներից.

- 1) նկուն-աներեր, թերի-ավարտուն, սուլ-սակավ
- 2) ծածուկ-բացեիբաց, խոռվ-հաշտ, խոնարհություն-ամբարտավանություն
- 3) անխոհեմ-ողջախոհ, տնտեսել-շուայլել, արի-վեհերոտ
- 4) հաղորդիչ-մեկուսիչ, ողորկ-անհարթ, եկամտաբեր-կորստաբեր

7

**Ո՞ր նախադասության մեջ քառագործածության սխալ կա:**

- 1) Ասպնջական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:
- 2) Հորեղբայրս հայտնի որսորդ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:
- 3) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
- 4) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներկուն աշակերտներին:

8

**Ո՞ր շարքի բոլոր քառերն են կազմությամբ ածանցավոր:**

- 1) թերակշռել, խելագար, վայելուչ, մեղմասահ
- 2) խանդոտ, փորձագետ, հպանցիկ, տհաճ
- 3) պարագլուխ, քսուք, անդրավարտիք, սիգաճեմ
- 4) մայիսյան, վարք, փորձանք, մարդկային

9

**Ո՞ր շարքի բոլոր քառերի հոգնակի թիվն է կազմվում - Աեր վերջավորությամբ:**

- 1) վաշկատուն, սաղցահատ, վկայագիր, հրաճիզ
- 2) քենուախույզ, աղախին, հողագործ, հովեկ
- 3) կրակակետ, աստղ, բաղաձայն, ժամացույց
- 4) թվական, ձուկ, մահճակալ, վիրակապ

10

**Ո՞ր նախադասության մեջ քանակական թվական կա:**

- 1) Անձրևի տասներորդ օրը գետի ջուրն այնքան առատ էր, որ կարող էր սայլերը քշելով տանել:
- 2) Այդ ժողովից մի քանի օր հետո Նիկողոս աղան զարհուրելի ծաղրուծանակի ենթարկվեց:
- 3) Ով տանը ժամացույց ուներ, անմիջապես նայում էր և սլաքներն ուղղում յոթից քառորդ անց:
- 4) Երեկոյան, երբ մենք բաց էինք թողնում մեր թոռոցիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:

11

**Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:**

- 1) Առաջին երկու շաբաթը շատ արագ անցավ, նորեկները սովորեցին գյուղին, և ամեն ինչ մտավ հունի մեջ:
- 2) Ակսել Բակունցն առասպեկի հերոսի պես ընդամենը մի քանի տարում սովորական գյուղդրակցից դարձավ մեծ գրող:
- 3) Գավառական փոքրիկ քաղաքում ավտոմեքենա տարին մեկ է երևում, իսկ փողոցներում էլ մարդ չկա:
- 4) Մայրը, վերջալույսի արևի շողերից աչքերը ձեռքով ծածկելով, նայում էր կածանի կեռումեռ պտույտին և սպասում, թե երբ են երևալու հարսն ու աղջիկը:

12

**Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն չկա:**

- 1) Ոչնչից և ոչ ոքից այնքան չէր զգուշանում, որքան իրեն անձնական թիկնապահից:
- 2) Բանախոսի դեմ ելույթ էին ունեցել երկու տեղացի նկարիչներ, ոմն արվեստագետ Ֆրանսիայից և այլոք:
- 3) Հասկանու՞մ եք, ոչ մեկ շփորձեց օգնել ինձ, երբ մենակ էի ու անօգ:
- 4) Չգիտեմ ո՞րդ կարող է գլուխ հանել այդ խճճված գործից:

**13 Ո՞ր նախադասության մեջ չեղոք սեռի բայ չկա:**

- 1) Նա փախավ մի քասն քայլ հեռու, կուչ եկավ մի ծառի տակ և գիրքը թնի տակ առավ:
- 2) Զարմացած նայեցի նրա դեմքին. այդ դեմքն արտահայտում էր միաժամանակ և զայրույթ, և՝ պաղատանք:
- 3) Ուղեկցուիին շատ էր տխրել և այլևս ոչինչ չէր խոսում:
- 4) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:

**14 Տրված հատվածներից քանիսո՞ւմ անդեմ նախադասություն կա:**

- Այս ցուրտ երկրի անհայտում անհուն Ընկնել, կորչել և ննջել հավետ:
  - Նորից անձը և, մշո՞ւշ, ա՞մպ, Թախի՞ծ անհուն, տխրա՞նք հեզ:
  - Իմ խաղաղ երեկոն է հիմա Սեղմալույս, և՝ տխուր, և՝ անուշ:
  - Արդյոք կժպտա՞ս, լուսեղե՞ն երազ:
- 1) չորսում
  - 2) մեկում
  - 3) երկուսում
  - 4) երեքում

**15 Ո՞ր նախադասության ընդգծված քառն է ենթակա:**

- 1) Քո ոռուսկերից, քո սրտից, քո հետքերից հառնած՝ Սեզ կողջունեն օրերը:
- 2) Քո ոսքերի վրա դու կրերես հետքեր,
- 3) Եվ կոպերիդ ներքո շոայլությամբ վերջին Արևը իր բույրը կվառե:
- 4) Գնում ես դեսի հեռուները վսեմ:

**16 Ո՞ր նախադասության մեջ քաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Բայց մեղքը, ավելի ճիշտ, ոճիրը արդեն կատարվել էր:
- 2) Եթե տեսներ այն, ինչ ես էի տեսել, այդպես չէր վարվի:
- 3) Ազատ ժամանակ նրա հիմնական զբաղմունքը ընթերցելն է:
- 4) Սեպենան շուտ էր եկել, բայց, փա՞ռ ոք Աստծո, վիրավորներ չկային:

17

**Ո՞ր տարրերակում դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

- 1) Ո՞ր երկրի սրտում բախիծ կա այնքան,  
Եվ այնքա՞ն ներում- ո՞ր երկրի սրտում:
- 2) Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,  
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը:
- 3) Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան  
Որոնեցին պատահական աչքերում  
Հարդագողի ուղիները ոսկեման...
- 4) Հոգմել եմ ամեն հովից թեքվելուց,  
Հոգուս մեջ հոգուս ցավը հեզմելուց,  
Ինք իմ ստվերից ահաբեկվելուց:

18

**Ընդգծվածներից ո՞րը բայական անդամի լրացում չէ:**

- 1) Ուղեկցում է ահը մահվան  
**Սեպ** ծննդյան պահից:
- 2) Բայց հուշերիս մեջ նայում ինձ **դարձյալ**,  
Ժպտում են դարձյալ աչքերը քո ջինջ:
- 3) Ու ես չասացի **ոչ ոքի** ոչինչ,  
Մինչև այս երգը լույս աշխարհ եկավ:
- 4) Դակատագիրն ինձ շպրտեց հարավ,  
Իսկ **քո** երազը քեզ հյուսիս տարավ:

19

**Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերայական դարձված չէ  
(նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դա մի մեծ հյուրասրահ էր կահավորված քանկարժեք իրերով:
- 2) Գնացքի շոգեկառքը զարդարել էին փողփողացող ալ դրոշներով:
- 3) Ամհայտ հեռուներից մինչև նախրյան այդ քաղաքը ձգված երկաթե գծերի վրայով  
գնացքը մոտեցել է կայարանին:
- 4) **Իր այդ մարդասիրական քայլն անելով** նև զրավեց շատ մարդկանց հոգիները:

20

**Ո՞ր նախադասության մեջ միջակետ չայստի դրվի (նախադասությունները  
կետադրված չեն):**

- 1) Մղձավանջը համառորեն հետապնդում էր նրան այդ մարդը ամեն գիշեր երազում  
տեսնում էր կորցրած բնօրրանը:
- 2) Այս նամակի հետ ուղարկում եմ նաև դրամ երբ ծախսես հիշիր որ այն հայրող է  
ուղարկել:
- 3) Մուշեղը մտածում էր կարգի բերել իր ընտանեկան գործերը նա նույնպես մի քանի  
օրից պետք է քողներ Ողական ամրոցը:
- 4) Սամվելի հայրն ուներ մի նպատակ որդուն դարձնել հայոց այրուձիի  
հրամանատար:

21

**Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամարանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. 26 տարեկան էր, որ ձեռնարկեց անհավատավի դժվար մի աշխատանք: Մի քանդակագործ ավելի քան հինգ մետր բարձրությամբ մարմարե բեկորից սկսել էր արձան քանդակել, բայց փշացրել էր մարմարն ու այդպես էլ թողել: Լավագույն վարպետներն անգամ հրաժարվում էին այդ խեղված մարմարից քանդակ ստեղծելուց:
  2. Քանդակագործն իր հերոսին պատկերել է մարտի պատրաստվելու պահին: Լայն բացած աչքերով նայում է նա հսկային՝ ձախ ձեռքում սեղմած պարսատիկը: Դավիթը լի է վճռականությամբ, հանդարտ է ու ահեղ:
  3. Միքելանջելոյի մանկությունն անցել է Ֆլորենցիայում: Արվեստագետի նրա տաղանդը վաղ դրսերվեց, և նա, հակառակ հոր կամքի, որոշեց նվիրվել արվեստին: Տասներեք տարեկան էր, երբ դարձավ նկարչի աշակերտ, իսկ շուտով հոյակապ քանդակների հեղինակ էր արդեն:
  4. Միքելանջելոն հանձն առավ այդ գործը: Երեք տարի անց քանդակը պատրաստ էր: Հինավորց առասպելը պատմում է, որ մենամարտում Դավիթը հաղթում է իր ժողովրդի թշնամուն՝ հսկա Գոդիարին:
- 1) 3, 4, 1, 2  
2) 3, 1, 4, 2  
3) 2, 3, 4, 1  
4) 2, 3, 1, 4

22

**Ո՞մ մասին է.**

«Նա սիրեց մենակեցությամ վարքը, իմշակես ասել է մեկը, թե ալեկոծված նազ շտապում է դեպի նավսիհանգիստը, իսկ ժումկալող մարդը անապատ է փնտրում: ... Գնում է Գոլդն գավառը և ապրում մենակյացի կյանքով»:

- 1) Վանահոր («Հին աստվածներ», Լևոն Շանը)
- 2) Ասպրամի («Գեորգ Մարզպետունի», Սուրացան)
- 3) Սամվելի («Սամվել», Բաֆֆի)
- 4) Մեսրոպ Մաշտոցի («Հայոց պատմություն», Մովսես Խորենացի)

23

**Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

1. Թուխ ամպն այլ բամպակ արէ ՚ք, ի ծաւէն դերձան քաշեցէ ՚ք
  2. Արեւն իր երեսք արէ ՚ք, զլուսընկան աստառ ձեւեցէ ՚ք
  3. Քանի՞ ու քանի՞ ասեմ. «Զիմ եարին կապան կարեցէ ՚ք
  4. Աստղերն այլ կոճակ արէ ՚ք, զիս ի ներս ողկիկ շարեցէ ՚ք»
- 1) 3, 2, 1, 4  
2) 1, 3, 4, 2  
3) 3, 2, 4, 1  
4) 3, 1, 2, 4

24

Ո՞ր պնդումը ճիշտ չէ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանի» վերաբերյալ:

- 1) Աբովյանը խոսում է ժողովրդին հոգեհարազատ քենաներով գրելու անհրաժեշտության մասին:
- 2) Աբովյանը խոսում է աշխարհաբարով գրելու անհրաժեշտության մասին:
- 3) Աբովյանը համաձայն է այն կարծիքին, որ մեր ազգը ուսումնասեր չէ, և կարդալը նրա համար արժեք չունի:
- 4) Աբովյանը բարձր է գնահատում գրաբարը՝ իբրև կատարյալ և անթերի լեզու:

25

Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր գլխում է Սամվելն իր հորն սպանում:

- 1) «Մեկը-արևմուտքում, մյուսը-արևելքում»
- 2) «Ուրացողը յուր տան շեմքի վրա»
- 3) «Երկու սուրիանդակ»
- 4) «Արաքսի որոգայթները»

26

Սուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի ո՞ր հերոսի խոսքերն են.

«Ամփոփիիր ինձ միջնաբերդի առաջ՝ ժայռերի բարձրության վրա, որտեղից կարողանամ հսկել Աշոտ Բոնավորի շիրիմին, որպեսզի նա յուր շուրջն ամփոփիված սրբերին չդավաճանեն»:

- 1) Սահակ Սևադայի
- 2) Աշոտ Երկարի
- 3) Ցիկ Ամրամի
- 4) Գևորգ Մարզպետունու

27

Ալեքսանդր Շիրվանզադեի «Ջառս» վեպի ո՞ր կերպարի մասին է հետևյալ հեղինակային խոսքը.

«Նա կանգնած էր երկու մարդու միջև՝ մեկը՝ միլիոնների ժառանգը, մյուսը՝ այն աղքատ երիտասարդը, որ իր ընտանիքը պահում էր մասնավոր դասերով»:

- 1) Արշակի
- 2) Սիրայելի
- 3) Մարուբիսանյանի
- 4) Սմբատի

**28 Դանիել Վարուժանի ո՞ր բանաստեղծություններից են տրված հատվածները:**

- ա. Ու պայքա՞ր, պայքա՞ր, պայքա՞ր երգեցի.  
-Չեզի ընծա՞ր, հայ մարտիկներ-  
Գրիշս եղավ անթրոց սըրտերու հնոցի...  
- Չեզի ընծա՞ր, քաջ մարտիկներ...  
բ. Գյուղակներեն հորիզոնները մինչ  
Կը տարածվի մեր մայրությունը հողի.  
Գարունն եկա՞վ, չի բավեր ձյունը թերև  
Ա՛ ծածկելու մեր մերկությունը հողի:  
գ. Ցորեն, կակաչ, կարոտով,  
-Կարավը կու լա,  
Կապեցի մեկ նարոտով,  
-Չեռքերն են հիճա: 2. «Զոն»  
դ. Հովե՞ր կ'անցնին.  
Այնքան կ'հորդի, կը կատղի դաշտը հոտքի,  
Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:  
Գոզին մեջեն ալեծածան հովիտին  
Ծովե՞ր կանցնին:  
1) ա- 3, բ- 2, գ- 1, դ-4  
2) ա- 2, բ- 3, գ- 4, դ-1  
3) ա- 1, բ- 3, գ- 4, դ-1  
4) ա- 2, բ- 4, գ- 1, դ-3  
3. «Ցորյանի ծովեր»  
4. «Արտերուն իրավերը»

**29 Հատվածներից ո՞րը Վահան Տերյանի բանաստեղծություններից չէ:**

- 1) Բարբարոսներ շատ կըգան ու կանցնեն անհետ,  
Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:  
2) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց.  
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...  
3) Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,  
Օղակելով լույս աստղերը մեկմեկու: 4. «Լուսամփոփի պես աղջիկ, աստվածանոր աչքերով,  
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի պես երազի...  
4) Լուսամփոփի պես աղջիկ, աստվածանոր աչքերով,  
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի պես երազի...

**30 Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Խահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմից:**

- 1) Գիշերն ահարկու՝ և՛ սև, և՛ հսկա, մի չղիկի պես թևերը փորեց,  
Անձիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:  
2) Ե՛վ անապատում, և՛ հավերժական  
Անուրջում հոգիս կլսե, կզգա  
Ղողանջը զանգի տիեզերական  
Եվ մեղմ կզգվե տատասկին դժնյա:  
3) Գմա՛, քարավա՞ն, ինձ հետդ քա՛րշ սուր  
Օտար, ամայի ճամփեքի վրա.  
Ուրտեղ կհոգնիս՝ զլուխս վար դիր  
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:  
4) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին  
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:  
Ղողանջն է միայն ձիգ քարավանի  
Հեռավոր, անհայտ ճանապարհների  
Հրապույրներով դյուրում իմ հոգին  
Թափառումների տենչով անմեկին...

31

Եղիշե Չարենցի «Հեռացումի խոսքեր» բանաստեղծության մեջ ո՞ր բառն է բաց քողած:

– Ի՞նչ էլ լինի, քույր իմ, քույր, հեռանալիս .....  
Խե՞ղած կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան...

- 1) չտանես
- 2) չտիրես
- 3) կհիշես
- 4) չանիծես

32

Ո՞ր տարրերակը պետք է տեղադրել բաց քողած տեղում:

Անտառում խորին խորհուրդներ կային,  
..... կային անտառում,  
Օրոր էր ասում աշունն անտառին,  
Սակայն անտառի քունը չէր տանում:

- 1) Եվ արձագանքներ
- 2) Կապույտ մշուշներ
- 3) Մարդկային հետքեր
- 4) Խոնավ բուրմունքներ

33

Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:

- Ու ես, աստիճանաբար հաշտվելով դժխւամ ճակատագրին, մի որոշ ժամանակ էլ անցկացրի, ու նախօրոք վճռված ժամկետը չլրացած, գնացի հարևան փողոցի վեցերորդ շենքը՝ զինվոր գրվելու:
- Ինքը դուրս եկավ, մոտեցավ գետի հուռքի կանաչով ծածկված ափին ու նստելով այնտեղ ընկած մի փտած գերանի՝ սկսեց անթարթ հայացքով դիտել շառաչուն գետի հաստատուն վազքը:
- Սմբատը, ծովեզրին արձանացած, լրելյայն ըմբոշխնում էր չքնաղ տեսարանը, ու հրճվում:
- Բայց իհմա ամեն ինչ պարզ է և չի կարելի խոչընդոտ դառնալ մի ուժի առջև, որը երբեք չես կարող կասեցնել:

34

Բառերից քանիսո՞ւմ ու ձայնավորի հնչյունափոխություն կա.

ըղձալի, ընդհանուր, ընչաքաղ, ըմակել, ընդունայն, ընկեր, ընտրանի, ընդեղեն, ընդսմին:

35

Տրվածներից քանի՞սը համանուն չուժեն:

քամի, գետին, անցավ, կանգնեց, վանեցի, հոսեր, վազեր, խնդրեր, աներ, զոց:

36

### Տրվածներից քանի՞սն են սահմանական եղանակի ժամանակաձևեր.

Թոշեիր, չխոնարհվես, լացել է, հանդիմանելու է, չեմ պաշտպանելու, չես հրամայի, ելնենք, կառուցեցի, խաղայի, հանգրվանեցիր, զարմացրիր, կայիր:

37

### Տրվածներից քանի՞սն են պարզ դիմավոր ձևեր.

Հեր ապաքինվել, պետք է մտածեիր, եփեցինք-բափեցինք, կարժանանա, մի՛ վարանիր, կանգ էր առել, դուրս եկավ, չպիտի լսես, թույլ մի՛ տուր, սիրտ արեց:

38

### Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:

Ահը սրտում՝ իջել է մայրս լեռներից՝ իր մեջքին զգալով փոքրիկ արարածի գոյությունը, իջել է ամպերի միջից: Պետք է որ մայրս թաքուն բերկլանք զգար իր սրտի տակ բարի արևից ջերմացած այն հովիտն իջնելիս:

39

### Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.

1. խճապատ, 2. լրագիր, 3. մրցապայքար, 4. խաղավարտ, 5. կաթված, 6. փափկել, 7. հրաման, 8. կահասենյակ, 9. փաղաքշանք :

40

### Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.

1. գրգիռ, 2. շրթունք, 3. անկյուն, 4. ցանցկեն, 5. դիմում, 6. անջատ, 7. աշխատանք, 8. վրիպակ, 9. անձավ:

41

### Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:

Սի քանի ամիս անցած՝ հայրս վերադարձավ Ղուբայից, ուր լինում էր տարվա մեծ մասը. նա, իհարկե, բարկացավ ինձ վրա, երբ մայրս հաղորդեց նրան իմ հանդուզն արարքի մասին:

1. **հաղորդեց** – ե խոնարհման պարզ բայ, ներգործական սեռ, **մասին** –կապ, հետադրություն
2. **մի քանի** - անորոշ դերանուն, **անցած** – հարակատար դերբայ, ածանցավոր
3. **վերադարձավ** – սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, **լինում** էր - անկանոն բայ, ներգործական սեռ
4. **իհարկե** - վերաբերական, **երբ** - հարաբերական դերանուն
5. **նրան** - անձնական դերանուն, տրական հոլով, **բարկացավ** - ա խոնարհման պարզ բայ, չեզոք սեռ

42

**Նշել պարզ նախադասությունների համարները:**

1. Բայց այդ առյուծը իր ծերուկ ծնողի առջև գառնուկի պես հեզ է, իր գյուղի աղջկների դիմաց շիկնում է ամորթիած:
2. Թագավորն ընկավ մտածմունքների մեջ և մորուսով ծնոտը հենեց աջին:
3. Ամենքը հետաքրքրված առաջ էին գալիս՝ տեսնելու սպանվածի կնոջը՝ անձանոթ իշխանութուն:
4. Արշակը շփոթված մտածում էր այդ լուրը ամբողջ երկրում տարածելու և ամեն տեղ հասցնելու մասին:
5. Չանցած մի քանի վայրկյան՝ ներս մտավ իշխանը՝ ըստ սովորության՝ ճգված կանգնելով բոլորի առջև:
6. Հայ ժողովուրդը՝ անզեն, սակավաթիվ, անպաշտպան, սարսափի ու անորոշության մեջ էր:

43

**Նշել այն պատկերավորման–արտահայտչական միջոցների համարները, որոնք գործածվել են տրված հատվածում.**

1. Քիխարերություն, 2. հանգավորում, 3. հակադրություն, 4. մակդիր, 5. անձնավորում:

Սեր տան աղբյուրն է մայրս,  
Սեր ծարավ քույրն է մայրս,  
Սեր տան անքունն է մայրս,  
Սեր անուշ քունն է մայրս,  
Սեր տան ճրագն է մայրս,  
Սեր արեգակն է մայրս...

44

**Նշել այն համարները, որոնցում նշված են հատվածներ Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքից:**

1. Հենց այդ օրից ել գլխին կարմիր շոր կապած աղջկը , որ մինչ այդ իմ քառասուն աշակերտներից մեկն էր, բոլորից զոկվեց և իմ աշքում դարձավ այն կետը, որի շուրջ պտտվում էր իմ ներքին աշխարհը:
2. Սուազին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մապին...
3. Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դրնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում:
4. Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին:

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛՛ Շիշտ, Մխալ և Զգիտեմ տարրերակներից որևէ մեկը:**

1. Գոյականը, ածականը, թվականը կարող են կիրառվել փոխանվանաբար:
2. Հայերենը ունի տասը խոսքի մաս, որոնցից նյութական իմաստ են արտահայտում միայն գոյականը, ածականը, թվականը, դերանունը և բայը:
3. Կապերը և շաղկապները արտահայտում են հարաբերություններ, և դրանց մեծ մասը նախադասության անդամ չի դառնում:
4. Եղանակավորող բառերը (վերաբերականներ) արտահայտում են դատողական վերաբերմունք, իսկ ձայնարկությունները՝ զգացական:
5. Հայերենում դեմքի կարգը բնորոշ է բայերին և դերանուններին, իսկ եղանակի կարգը՝ եղանակավորող բառերին և բայերին:
6. Կան բառեր, որոնց խոսքիմասային պատկաննելությունը նախադասությունից դուրս որոշելն անհնար է:

## Բ մակարդակ

46

Ո՞ր տարրերակում է տառի կամ տառակապակցության քվային արժեքը սխալ նշված.

- 1) Է-7
- 2) ՍԻԲ-222
- 3) Լ-30
- 4) ՐՈ-5006

47

Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավաճիկ կա.

- 1) ընդառաջ, շնորհ, զննել, սրբապատկեր
- 2) խճանկար, ճգնակյաց, նրբիրան, կնքահայր
- 3) երկլնտրանք, պատարագ, խնկաման, դշխուհի
- 4) սկիզբ, անձրևոտ, փղոսկր, չնաշխարհիկ

48

Տրված բառերից քանիսո՞ւմ մեկից ավելի հնչյունափոխություն կա.

բրդատվություն, մատենագրություն, բնութագրական, ծմնդյան, դստրիկ, չվացուցակ, միջնորմ, պատվախնդրորեն, քննաշրջան, հանդգնել:

- 1) հինգում
- 2) յոթում
- 3) ութում
- 4) բուրում

49

Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.

վեղար, ապահով, կնքուղ, սապատ, սմրուկ, դեղձան, որդի, քաղցրախոս, քաղրիջան, խարտյաշ, ուազմիկ, ուստր:

- 1) երկու
- 2) հինգ
- 3) չորս
- 4) երեք

50

Ո՞ր շարքի ոչ բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:

- 1) ձեռնոց նետել, խաղից դուրս գալ, աչք փակել
- 2) հետին պլան մղվել, կաշվից դուրս գալ, խոսքի թելը կտրել
- 3) աչք չբացել, սպիտակ դրոշ պարզել, մեջքը ծոել
- 4) աչքը թեքել, պատերը ներկել, արևը խավարել

51

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) ժառանգ, ճանապարհ, փառք, վայրագ
- 2) թախիծ, վերարկու, արմատ, թիրախ
- 3) պնակ, կախարդ, խնդիր, տրտում
- 4) դատարկ, փոթորիկ, կարոտ, շքեղ

52

Ո՞ր շարքում հապավում չկա:

- 1) գետանց, վերհուշ, քաղբյուրո, շուրջկալ
- 2) տեղանուն, լրտես, ինքնուս, չարքաշ
- 3) երկրնեո, պատկից, պետկրկես, ջրշուն
- 4) փղոսկր, մարզպետ, կուրսունիկ, խոտհունձ

53

Ո՞ր շարքում ի հոլովման ենթարկվող բառ չկա:

- 1) գետաձի, տիկին, քաղաքաղուու, ամառ
- 2) հայելի, ուռենի, արփի, ընկուզենի
- 3) դիմում, հանդիպում, կառուցում, ձուլում
- 4) ժամանել, երկրպագել, ուտել, շանթարգել

54

Ո՞ր նախադասության մեջ դիմորդ հոդ կա:

- 1) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:
- 2) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
- 3) Սեպտեմբերի քսաննեկին հայերս մեծ շուրջով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
- 4) Մոայլ խորհրդածությունները քույլ չտվեցին գիշերս աչք փակել:

55

Ո՞ր նախադասության մեջ Ժխտական դերքայ (Ճևաբայ) կա:

- 1) Քեզ երբեք սիրտս չի մոռանա, ին մաքոնի, առաջին ին անուրջ:
- 2) Սի՛ դատիր, որ չդատվես:
- 3) ... Իսկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր:
- 4) Ին խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ թե չինեին ընկեր, բարեկամ...

56

Ո՞ր տարրերակում է հեռու-՛ հանդես եկել որպես կապ:

- 1) Երկար տարիներ լինելով հայրենիքից հեռու՝ նա տառապում էր մի հիվանդությամբ, որ կոչվում է կարոտախտ:
- 2) Ոչ ոք չէր կարծում, որ տարիներ հետո նա կլինի այլքան հեռու:
- 3) Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ. աչքս է հեռուն...
- 4) Լինե՛ր հեռու մի անկյուն, լինե՛ր մանկան արդար քուն:

57

**Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարրերակն է ճիշտ:**

Մեծ եղբայրս՝ Հակոբը, բարկացած լրեցրեց Լևոնին:

1. Հակոբը (ա. բուն բացահայտիչ, թ. ենթակա, գ. հատկացուցիչ)
  2. բարկացած (ա. որոշիչ, թ. ձևի պարագա, գ. միջոցի խնդիր)
  3. լրեցրեց (ա. ստորոգելի, թ. բաղադրյալ ստորոգյալ, գ. պարզ ստորոգյալ)
  4. Լևոնին (ա. հանգման խնդիր, թ. ուղիղ խնդիր, գ. վերաբերության խնդիր)
- 1) 1-ա, 2-թ , 3- զ, 4-թ
  - 2) 1-թ , 2-զ , 3- թ, 4- ա
  - 3) 1-զ , 2- թ, 3-ա, 4-թ
  - 4) 1-թ , 2-ա , 3-զ , 4- ա

58

**Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (Երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

1. Ծիծառախիտ ծովի ծփանքն այնքան կենարար էր, որ ճակատագրից հալածված մարդիկ մի վայրկյան կարծես մոռացության տվեցին իրենց տառապանքը:
  2. Նրան թվում էր, թե ինքը ժամանակից ու տարածությունից դուրս էր մղված:
  3. Ամենից բարձր հոխորտում էիր դու, որ ստեղծված իրավիճակի բուն մեղավորն էիր:
  4. Այժմ նա հալածվում էր նրանցից, ովքեր ժամանակին աջակցել էին իրեն:
- ա. ձևի պարագա  
թ. չափի պարագա  
զ. բացահայտիչ  
դ. ներգործող խնդիր  
ե. ենթակա
- 1) 1-թ, 2-ե, 3-զ, 4-դ
  - 2) 1-ա, 2-ե, 3-դ, 4-զ
  - 3) 1-թ, 2-ա, 3-զ, 4-ե
  - 4) 1-ե, 2-թ, 3-զ, 4-դ

59

**Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

- 1) *Թումանյանի հորելյանը մի սովորական հանդես չէր, որ կատարվում է նշանակված օրը և հետևյալ օրն իսկ մոռացվում:*  
Թումանյանի հորելյանը նշանակված օրը կատարվող և հետևյալ օրն իսկ մոռացվող մի սովորական հանդես չէր:
- 2) *Գրողներից ովքեր մտերմություն էին անում Զորյանի հետ, գիտեին նրա նրազգաց քնավորությունը:*  
Գրողներից Զորյանի հետ մտերմություն անողները գիտեին նրա նրազգաց քնավորությունը:
- 3) *Շանաշեց ինձ, նոյնիսկ իիշեց իր խորհուրդը, որ տվել էր ինձ՝ սովորել, բարձրագույն կրթություն ստանալ:*  
Շանաշեց ինձ, նոյնիսկ իիշեց սովորելու, բարձրագույն կրթություն ստանալու մասին ինձ իր տված խորհուրդը:
- 4) *Կարդում էր հանդարտ, մի այնպիսի ջերմությամբ, որ ամնկատելի նվաճում էր ընթեցողին:*  
Կարդում էր հանդարտ, ընթեցողին ամնկատելի նվաճող մի ջերմությամբ:

**60** **Տրված պարզ (դերբայական դարձվածով ) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

- 1) *Թռուցիկը պատմում էր դեկավարներից մեկի՝ Թիֆլիսում ինքնասավան լինելու մասին:*  
Թռուցիկը պատմում էր դեկավարներից մեկի մասին, որը Թիֆլիսում ինքնասավան էր եղել:
- 2) *Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց Բակունց Ստեփան դայու տղայի՝ Ալեքսանդրի գրածը:*  
Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց այն, ինչ գրել է Բակունց Ստեփան դայու տղան՝ Ալեքսանդրը:
- 3) *Գուսանական ու ժողովրդական երգեր լսելու համար Սարյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն:*  
Սարյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն, որպեսզի գուսանական ու ժողովրդական երգեր լսեր:
- 4) *Նա գրաճանաչ էր դարձել 1921-ին՝ վեց տարեկանը դեռ չլրացած:*  
Նա գրաճանաչ էր դարձել 1921-ին, երբ վեց տարեկանը դեռ չէր լրացել:

**61** **Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

*Լու Անջելեսի արքանյակ քաղաքում (1) Փաստենայում հայերեն նոր թերթ էր հիմնվում (2) «Սասիս» (3) հիմնադրամ պիտի ստեղծվեր հրատարակության (4) նախօրոր հաշվարկված (5) ծախսերը հոգալու համար: Դրամական միջոցների (6) հայերի շրջանում կազմակերպված հանգանակությանը մասնակցեցին շատերը (7) ի թիվս նրանց յոթ-ութ տարեկան մի տղա(8) Հարություն Գրիգորյանը: Նա թերթին նվիրեց ութ դրլար այդ գումարը գոյացած պատպաղակի և անուշեղենի համար տատիկի տված ցենտերից (9) դարձավ հիմնադրամի(10) մանկական մաքուր ձեռքերով դրված հիմնաքարը:*

- 1) 2, 3, 5, 6, 8
- 2) 1, 2, 6, 8, 10
- 3) 2, 4, 7, 8, 9
- 4) 1, 3, 4, 7, 10

**62** **Ո՞ր խոսքը Հակոբ Պարոնյանի «Սեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

1. «...Բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տեսներ տունը. առտվվնեն մինչև իրիկուն ծունկ ծունկի վրա կը դնեն և կերգեն, կը պարեն և կամ բոլոր օրը կը պտտին. հիմակվընեն ըսեն, վերջեն ինձի պատճառ չբրննես... անանկներ ալ կան, որ իրենց ուզած մեկը կը սիրեն և շատ անգամ անոր հետ գեղ մը կը փախչին...»:  
ա. Արխողոն աղա  
բ. բանաստեղծ  
գ. Վարժապետ  
դ. Շուշան
2. «...Անոնք, որ գիրքով կզբաղին, թշվառությամբ կզբաղին: Հառաջադիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք, ...ապագա կըսենք և դեպի անցյալ կը վագենք»:  
ա. Արխողոն աղա  
բ. բանաստեղծ  
գ. Վարժապետ  
դ. Շուշան
3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսուն դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գոչի դեմ, ...կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները»:  
ա. Արխողոն աղա  
բ. բանաստեղծ  
գ. Վարժապետ  
դ. Շուշան
4. «Միտքի ի՞նչ է, եղբայրս, ես քեզի բան մը չըրի, ինչ կուզես ինձմեն, զնա քեզի բարկացնողին զրուցե այդ խոսքերը...»:  
1) 1-ա, 2-զ, 3-դ, 4-բ  
2) 1-բ, 2-դ, 3-զ, 4-ա  
3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-զ  
4) 1-դ, 2-զ, 3-բ, 4-ա

63

### Տրված հատվածներից ո՞րը որ ստեղծագործությունից է:

1. – «Վարձա կն ահա, տեղ բացեք,  
վարձակը, վարդ տեղացեք.  
Մազերուն մեջ, ոտքին տակ  
մարգարիտնե ՞ լեցուցեք»:  
ա. «Վայրկյան» (Մ. Սեծարենց)
  2. Ես ուզեցի լուռ մենանալ,  
Սիրել փոքրիք, խորշեր բավուտ,  
Սիրել կայծերն երկնի կապուտ,  
Առորվան շաղն, իրիկվան բալ,  
Ծակատագրիս սև գիծ կարդալ,  
Խոլկալ, սուզիլ, ըզմայլիլ սուտ:  
բ. «Հարճը» (Դ. Վարուժան)
  3. Թույլ շրջյուն մը, հետո բույր մը մշկենի.  
Եվ համրագին գիրքը ձեռքես կ' իյնա վար.  
Երազներու պերճուիին է որ կ'անցնի,  
Ու կը փոքրի ծովակն հոգվույս՝ մեղմավար:  
գ. «Տրտունջը» (Պ. Դուրյան)
  4. Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,  
Անոր համար Նա դրավ այդ լուսին.  
Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,  
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վրան:  
դ. «Սիրել» (Պ. Դուրյան)
- 1) 1-ը, 2-դ, 3-ա, 4-զ  
2) 1-զ, 2- ա, 3-դ, 4-ը  
3) 1-ը, 2-ա, 3-դ, 4- զ  
4) 1-զ, 2-դ, 3-ա, 4-ը

64

### Քանի՞ անկախ դերքայ կա տրված հատվածում:

Հաջորդ գարնանը մեր արագիլ եկավ մեն–մենակ: Բույնը դիտելուց հետո գնաց կանգնեց ճահիճը, կանգնեց կնոջ զարկված տեղի վրա, կանգնեց ու նորից եկավ բույնը: Եվ ամեն օր գնում էր նա այնտեղ, մի ոտքի վրա ժամերով տխուր կանգնում՝ վիզը ծուած, գլուխը թևերի տակ դրած: Տեսնում էինք հաճախ, թե ինչպես մի արագիլ մոտենում է նրա բնին, սկսում է նրա հետ խոսել ու դժկամ հեռանում է: Երբեմն էլ այդ եկվոր արագիլները փորձում էին նստել բնի մեջ, բայց նա մերժում էր և բույն մտնելիս նրանց հեռացնում: Քանի մեր արագիլ վանում էր նրան, նա նույնքան համառությամբ նորից թևերը փոռում էր արագիլի վրա:

65

### Բառերից քանիս՞ն հնչյունափոխություն կա.

Իջվածք, թևավոր, մանկություն, ուխտադրուժ, դեռափրիթ, պտղամիս, ընձուղտ, կարծրանալ, վայրէջք, տվյալ:

66

### Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.

հակոտնյա, մեղք, հակառակ, հանցանք, հովատակ, մեղկ, նժույզ, հրովարտակ, զանցանք, ներիակ, վարգ, երիվար:

67

**Նշել այն նախադասությունների համարները, որոնցում պարագա ստորադաս նախադասություն կա:**

1. Բոլորը հասկացան՝ իենց Արամայիսը խանգարեց գործի կարգավորմանը
2. Նրանք հավաքվեցին խարույկի շորջը, իենց կրակի բոցերը մի փոքր մեղմացան:
3. Երբ հասան լեռնաշղթայի վեշերին, երեխաները ցրվեցին տարբեր կողմեր:
4. Թեավետ Մարատը գործը կատարում էր անթերի ու արագ, տնօրենը դարձյալ դժգոհում էր:

68

**Նշել այն շարքերի համարները, որոնցում սխալ են համապատասխանեցված տրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակները.**

1. աղեկ – լավ
2. բարկօղի – կոնյակ
3. հավկիթ – ձու
4. ալեհավաք – շանթարգել
5. աղվոր – զեղեցիկ
6. հանրակառք – կառք

69

**Նշել հատվածների ճիշտ հաջորդականությունը:**

1. Երնե՛կ նըրան, որ իր գործով  
Կապրի անվերջ, անդադար...
2. Ես լավության խոսքն եմ ասում,  
Որ ժրադտում է մեր սրբաթին...
3. Գործն է անմահ, լա՛վ իմացեք,  
Որ խոսվում է դարեղար...
4. Չարն էլ է միշտ ապրում անմեռ,  
Անե՛ծք նըրա չար գործքին...
5. Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,  
Լավ արարքը, լավ մարդին...
6. Որդիդ լինի, թե հերն ու մեր,  
Թե մուրազով սիրած կին...

70

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Զգիտե՞ս տարբերակներից որևէ մեկը:**

1. Հարակատար դերբայը կարող է կատարել ձևի պարագայի, ժամանակի պարագայի, որոշչի պաշտոններ:
2. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել որոշչի պաշտոն:
3. Բոլոր անկախ դերբայները կարող են կատարել ժամանակի պարագայի պաշտոն:
4. Անորոշ դերբայը կարող է հանդես գալ բարլարյալ ստորոգյալի կազմում:
5. Անորոշ դերբայը կարող է կատարել որոշչի և հատկացուցչի պաշտոններ:
6. Անորոշ դերբայը գործիական հոլովով կարող է դառնալ ձևի, ժամանակի և տեղի պարագա: